# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվական
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու հրավերով նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Գեվորգ Բաբուջյանը, Վոլոդյա Էլբակյանը, Արմեն Համիկյանը, Վալոդյա Հովհաննիսյանը, Տիգրան Մաթեվոսյանը, Գեղամ Պետրոսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Ռոման Համայակյան , Ռոբերտ Ղազարյան , Ահարոն Ոսկանյան, Սիրանուշ Չախոյան, Ռուբիկ Քաբաբյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Մաթեվոսյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. Ա. Իգիթյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 31-ի թիվ 8 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 20-ի թիվ 21, 27, 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 116, 117, որոշումների մեջ փոփոխություններ կատարելու եվ 2018 թվականի մարտի 20-ի թիվ 21 որոշման թիվ 1, թիվ 27 որոշման թիվ 1, 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 116 որոշման թիվ 1 և 117 որոշման թիվ 1 հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22_ի թիվ 139 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6, թիվ 7, թիվ 12 հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայրի Կառնուտ) համայնքի սեփականությունը համարվող 3.11454 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 12-Ի թիվ 10 որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզական խմբերում պարապողների նվազագույն թիվը հաստատելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ոսկե մեդալակիր շրջանավարտին դրամական աջակցություն տրամադրելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 21, 27, 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 116, 117, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1, ԹԻՎ 27 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1, 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 116 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ԵՎ 117 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. Ա. Իգիթյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 515-Ն որոշումը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 21 որոշման թիվ 1, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերանվանման և կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 27 որոշման թիվ 1, 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի

«Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը

հաստատելու մասին» թիվ 116 որոշման թիվ 1, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Ջրառատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Ջրառատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 117 որոշման թիվ 1 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ թիվ , թիվ 1,2,3,4,5,6,7, 8 հավելվածների:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22_Ի ԹԻՎ 139 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ 2, ԹԻՎ 3, ԹԻՎ 4, ԹԻՎ 5, ԹԻՎ 6, ԹԻՎ 7, ԹԻՎ 12 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. Ա. Իգիթյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ հոդվածի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների 2021 թվականի քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 139 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 2-ի:
3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 4 հավելվածը շարադրել նոր

խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 3-ի:

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 4-ի:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 5-ի:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 7 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 6-ի:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 139 որոշման թիվ 12 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 7-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՌՆՈՒՏ) ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 3.11454 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. Ա. Իգիթյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության «Ախուրյանի կոոպշին» սահմանափակ պատասխանատվության ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի օգոստոսի 13-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, համաձայն որի նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 834-Ա հրամանով Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության «Ախուրյանի կոոպշին» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման 01.06.2021 թ. N ՇԱԹ-29/651 թույլտվության, 01.06.2021 թ. NL-651 լեռնհատկացման ակտով և օգտակար հանածոյի արդյունահանման և /կամ/ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով 01.06.2021թ. N Պ-651 ընդերքօգտագործման

պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող /բնակավայր՝ Կառնուտ/ անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների «Կառնուտ-1» տեղամասում բաց եղանակով, 50 տարի ժամկետով անդեզիտաբազալտի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով նախատեսված (ընդերքօգտագործման պետական գրանցման վկայական՝ 11.10.1995թ. N 55.070.00108) 08-053-0124 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող ընդամենը 3.11454 հեկտար համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասերը /2.74879, 0.35372, 0.01203 հեկտար/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն՝ ընկերության կողմից այդ հողամասում անդեզիտաբազալտի արդյունահանում կազմակերպելու և հողի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Կառնուտ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. Ա. Իգիթյան/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 10 որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ՊԱՐԱՊՈՂՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. Ա. Իգիթյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի թիվ 789-Ն որոշման 6.1 կետը, 2005 թվականի սեպտերմբերի 1-ի թիվ 1428-Ն որոշման դրույթները՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզական խմբերում պարապողների նվազագույն թիվը ըստ պատրաստության փուլերի՝ համաձայն հավելված 1-ի և ամրագրել կազմակերպության կանոնադրությունում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. Ա. Իգիթյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածով նախատեսնված գումարներից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչ, Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոցի շրջանավարտ, ոսկե մեդալակիր Արշակ Լևոնի Գեղամյանին տրամադրել աջակցություն՝ 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Ավագանու անդամներ

ՖՐՈՒՆԶԵ ԱՆՏՈՆՅԱՆ

ԺԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԴՐՄԵՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԱԴԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹՈՍՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Լուսինե Մաթևոսյանը

_____